ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

# «ԻՆՉ ԿԻՆ... ԵՍ ՃԱՆԱՊԱՐՀ ԵՄ, ԿԱՄՈՒՐՋ»




***Հունիսի 23-ին, Թբիլիսիում, Վրաստանի գրողների տանը, տեղի ունեցավ վրաց ճանաչված բանաստեղծուհի Թամար Գաբրոշվիլու «Քրիզբայի անթոլոգիան» բանաստեղծական ժողովածուի շնորհանդեսը: Այն հանդիսավորապես բացեց Վրաստանի գրողների միության համանախագահ Մաղվալա Գոնաշվիլին: Շնորհակալության եւ երախտիքի խոսքով հանդես եկավ գրքի հեղինակ Թամար Գաբրոշվիլին:***

***Օրվա առիթով, Հայաստանից ժամանել էին ՀԳՄ անդամներ՝ ժողովածուի թարգմանիչ, ծնունդով Թբիլիսիից, այժմ երեւանաբնակ Մաղվալա Գեուրկովա-Սահակյանը, գիրքը լույս ընծայած «Հայաստան» հրատարակչության տնօրեն, բանաստեղծ Վահագն Սարգսյանը, գրականագետ Արմեն Հովհաննիսյանը, բանաստեղծ, թարգմանիչ Հարություն Հովնաթանը, գրականագետ, թարգմանիչ Շանթ Մկրտչյանը: Նախաձեռնությունը ողջունեցին միջոցառմանը ներկա Թբիլիսիի սակրեբուլոյի անդամ Գուլիկո Ջումբաձեն, գրականագետ Լուիզա Մեդուլաշվիլին, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը եւ ուրիշներ, ովքեր իրենց խոսքում խրախուսեցին հայ եւ վրաց գրողների միջեւ ներկայիս արգասաբեր***

Մաղվալա Գեուրկովա-Սահակյանի թարգմանությունից շահել է թե' հեղինակը եւ թե' մենք՝ ընթերցողներս: Ի դեպ, մեծ մեղք է, երբ թարգմանիչը, առանց հեղինակի հոգու հետ հաղորդակցության մեջ մտնելու, մոտավոր բառերով, երբեմն էլ՝ նյութին անտեղյակ, էջեր է սեւացնում: Մեծ բանաստեղծ Հովհաննես Շիրազն ասում էր. «Եթե ճրագը թարգմանի արեգակին, արեգակը կընկնի վար, իսկ եթե արեգակը թարգմանի ճրագին, ճրագը երկինք կելնի»: Այս պարագային, իրար են հանդիպել երկու լուսատուներ, եւ երկուսն էլ, երկու լեզվով, մեր հոգու երկնային երկնքում են:

**Քրիզբան** ծաղկի անուն է: Եթե մանուշակը նախընտրում է խոնավ եւ ծածուկ տեղ, ապա քրիզբան սիրում է բնակություն հաստատել քարի մեջ: Քրիզբան նախընտրում է սուրբ տառապանքը՝ կռիվ տալով եւ հաշտության գալով քարի հետ: Խորհրդանշական այս ծաղիկն իսկ ասում է, որ հեղինակը տափաստանի բնակիչ չէ, լեռնուհի է: «Քրիզբան» վկայելու է նաեւ, որ հեղինակը լայն ու հեշտ, այն է՝ կորստյան տանող ճամփով ընթացող չէ: Ինքն իր մասին վկայում է. **«Ի՞նչ կին... // Ես ճանապարհ եմ, կամուրջ»:**

Մտա բանաստեղծուհու աշխարհը, անցա նրա բացած ճանապարհով եւ համոզվեցի, որ ինքը ճիշտ է: Կարդում էի, լսում եւ զգում, որ նրա մեջ սուրբ հոգով խոսող մեկը կա: Զգում էի, որ նա սիրո մեջ է, եւ սերն էլ նրա մեջ:

Երբ ասում են բանաստեղծություն, հիկույն պատկերացնում ենք հանգ ու վանկ, մեջտեղ են գալիս տաղաչափություն, բանաստեղծություն կառուցելու սկզբունքներ: Ներդաշնակությունն այստեղ ռիթմերով չէ, հանգերով ու վանկերով չէ, բառերի մեջ եղած մեղեդիներն են, որ ներդաշնակում են միմյանց: Բառերն այստեղ, օդում թռչող թռչունների նման, ձայն են տալիս միմյանց, եւ այդ ձայնը հավիտենությունից է: Բանաստեղծուհին դա անում է բնությանը ձուլված, բնություն դարձած՝ բնության մեջ տեսնելով իրեն եւ բնությունը տեսնելով իր մեջ: Համո Սահյանի բառերով ասած, հայրենի բնությունն իր իսկ աչքերով իրեն նայում է նույնացած, իրավունք է ստանում ասելու. **«Հայրենիքը ես եմ»:** Ուրեմն, այս ժողովածուի բանաստեղծություններին առնչվողը Վրաստանին եւ վրաց ժողովրդին հաղորդակից է լինելու:

Քանի որ սերը սովորեցնելով չէ, Թամար Գաբրոշվիլին տալիս է սիրելու իր իսկ օրինակը, տալիս է ազգի եւ Աստծո դուստրը լինելու օրինակը: Նա տալիս է գիրն ու գրիչը հարգելու, գրով ու գրչով խոսելու եւ խոսեցնելու օրինակը:

Սովորաբար, ասում են՝ գրել է սիրո թեմաներով կամ էլ՝ գրում է սիրո մասին: Թամար Գաբրոշվիլու պարագային, այդպես չես ասի, որովհետեւ նրա համար սերը թեմա չէ, նրա խոսքը սիրո մասին չէ, նա ինքը բոլորանվեր սեր է: Սիրուց ծնվածը սեր է լինելու, ինչպես որ, ասենք, հոգուց ծնվածը հոգի է: Բանաստեղծուհուն հետաքրքրողը թեման չէ, եւ ոչ էլ նպատակ ունի ծաղկած դաշտը ներկայացնել: Նրան անհանգստացնողը ազգի եւ մարդկության ճակատագիրն է: Նրա բառերը բանալիներ են, որ բացում են երկնքի դռները:

Ո'չ գարունն է նոր, եւ ո'չ էլ՝ դաշտի ծաղիկը: Այս գրքի նորը բանաստեղծուհու հայացքն է, վերաբերմունքը: Նորը շունչն է նրա, խոսելու խոնարհությունը:

Թամար Գաբրոշվիլի բանաստեղծուհու մեծագույն արժեքը միայն իր անձն ու իր ընտանիքը փրկելը չէ: Ազգի դուստրը ազգին չի մոռանալու.

***Աստված իմ, // Արթնացրու մեր ազգը, // Տուր նրան ուժ եւ կարողություն // Բարի գործերի համար... // ...Ներս տար արեւը, ժպիտ տուր վրացիներին: // Պայծառացրու մեր ժողովրդին, // Տուր գեղեցկություն, մեծ սեր...***

Մեծ սեր, որ ասում է, Աստծո սերն է, որի կարիքը մենք բոլորս ունենք: Գրելը մի բան է, գրող լինելը՝ մեկ այլ բան: Թամար Գաբրոշվիլին ավելին է, քան այսօրվա գրող կոչվածը՝ իր անդամատոմսով: Գրելս ո՞րն է, հորինելս ո՞րն է, բան պիտի ունենաս ասելու եւ ասես: Գրիչ վերցնողը բահ վերցնողի նման է, երկուսն էլ պարտավոր են Աստծո դաշտի մշակը լինել, մեկը՝ հող-դաշտի, մյուսը՝ հոգի-դաշտի: Մեկը հողի սերմնացանն է, մյուսը՝ բառի սերմնացանը: Հողն ընկած սերմը այլեւս քոնը չէ, հողինն է, հոգուն հասած բառը նույնպես դադարում է քոնը լինելուց, հոգունն է, ասել է թե՝ բոլորինն է:

Երբ Թամար Գաբրոշվիլին Վրաստան է ասում, իմ մեջ նոր զորությամբ արթնանում է Հայաստանը: Երբեմն կրկնում եմ նրան, որովհետեւ ավելի լավ խոսել չեմ կարող. **«Ես՝ քարե ծաղիկս, քեզ մոտ կբուսնեմ»:** Հիրավի, միեւնույն բանը խորհում ու խոսում ենք, տարբեր են մեր արտահայտչաձեւերը: Համո Սահյանն ասում է. **«Լռած զանգ է կյանքս»,** իսկ ահա Թամար Գաբրոշվիլին կարծես արձագանքում, մխիթարում է. **«Ուրիշները կգան... // Ու նորից կհնչեն զանգերը»:** Խնդրեմ, ինքը եկել է, եւ վերստին հնչում են լռած զանգերը, ու նրանց երկնային ղողանջը Հայաստան հասնում է:

*ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՆԱԹԱՆ*

ՓԱՌԱՏՈՆ

# ԳԻԱ ԿԱՆՉԵԼԻ. «ԴԻԼԻՋԱՆՈՒՄ ՎԵՑ ՍԻՄՖՈՆԻԱ ԵՄ ԳՐԵԼ...»

## ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ՎՐԱՑ ԿՈՄՊՈԶԻՏՈՐԻ ՓԱՌԱՏՈՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ




Վրաց մեծանուն կոմպոզիտոր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Գիա Կանչելուն նվիրված փառատոնը անցավ հունիսի 18-20-ը Հայաստանում, «Արամ Խաչատրյան» համերգասրահում, Հայաստանի պետական երիտասարդական նվագախմբի, Հայաստանի մշակույթի նախարարության աջակցությամբ:

Կոմպոզիտոր Գիա Կանչելին բազմիցս եղել է Հայաստանում, որտեղ ունեցել է հիանալի ընկերներ. Էդուարդ Միրզոյան, Ալեքսանդր Հարությունյան, Ավետ Տերտերյան:

- Դիլիջանում վեց սիմֆոնիա եմ գրել, եւ ձեր երկիրն ինձ հարազատ է: Կամերային ու սիմֆոնիկ երաժշտությանը համընթաց, վաթսուն տարի աշխատել եմ կինոյում եւ թատրոնում: Ասեմ, որ ֆիլմերի համար երաժշտություն գրելն ինձ երբեք չի խանգարել ավելի լուրջ գործեր ստեղծել,- փառատոնի բացմանը ասաց Գ.Կանչելին:

Կանչելին հավելեց, որ իր ծանոթությունը երաժշտության հետ տեղի է ունեցել երաժիշտներ Գլեն Միլլերի, Օսկար Փեթերսոնի, Էլլա Ֆիցջերալդի միջոցով, որոնք իր վրա մեծ ազդեցություն են թողել: Կոմպոզիտորը շատ է սիրում ջազ երաժշտությունը:

Նա շեշտեց, որ ժամանակի ընթացքում իր հայացքները տարբեր երեւույթների շուրջ փոխվել են:

- Մինչեւ 45 տարեկան դառնալս, չէի սիրում Ֆրանց Շուբերտի գործերը: Հետո միայն ընկալեցի նրա երաժշտության ողջ գեղեցկությունն ու հանճարեղությունը,- պատմեց Կանչելին եւ շարունակեց,- իմ երաժշտությամբ փորձել եմ ներկայացնել այն դեպքերն ու իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել տվյալ ժամանակահատվածում, եւ գուցե չհավատաք, բայց ինձ հուզում է աշխարհում կատարվող ամեն բան. իրավիճակն իմ հայրենիքում, Ռուսաստանում, քաղաքակիրթ ու ոչ քաղաքակիրթ աշխարհում:

Հիշեցնենք, որ Գիա Կանչելին «Միմինո» ֆիլմի երաժշտության հեղինակն է: Նրա ստեղծագործությունները Հայաստանում «կենդանի» հնչեցին առաջին անգամ:

Փառատոնի շրջանակում, «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի ունեցան սիմֆոնիկ համերգները, որոնց ընթացքում հնչեցին կոմպոզիտորի մեծակտավ ստեղծագործությունները: Իսկ հունիսի 19-ին, Երեւանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը կայացավ երեկո, որի ժամանակ բայանահար Ալեքսանդր Սեւաստյանը եւ կլառնետահար Յուլիան Միլկիսը ներկայացրեցին Գիա Կանչելու հայտնի մեղեդիները՝ գրված թատրոնի եւ կինոյի համար:

Ասենք, որ Գիա Կանչելին ծնվել է 1935 թվականի օգոստոսի 10-ին, Թբիլիսիում: Ավարտել է տեղի երաժշտական դպրոցը, իսկ 1959 թվականին՝ Թբիլիսիի պետական համալսարանի երկրաբանության ֆակուլտետը: Ապա սովորել է Թբիլիսիի կոնսերվատորիայում եւ 1963 թվականին ավարտել կոմպոզիցիայի բաժինը: Դասավանդել է Թբիլիսիի կոնսերվատորիայի գործիքագիտության բաժնում, այնուհետեւ վարել Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան պետական ակադեմիական թատրոնի երաժշտական մասը:

Այսօր բնակվում է Հոլանդիայում:

*ԼԵՎՈՆ ԱԶՐՈՅԱՆ*

ՀԱՄԵՐԳ

# ՆՎԻՐՎԱԾ ԷՐ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱՆ



***Հունիսի 20-ին, Թբիլիսիի Դավիթ Աղմաշենեբելու պողոտայի վրա գտնվող Վարդերի այգում, հանդիսավորապես նշեցին Փախստականների միջազգային օրը: Այն կազմակերպել էր Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիան եւ փախստականների ինտեգրման «Բաց տուն» կենտրոնը:***

Միջոցառումը բացեց Վրաստանում ՄԱԿ-ի ասոցիացիայի փախստականների ինտեգրման «Բաց տուն» կենտրոնի ղեկավար Մակա Չիչուան:

Համերգային ծրագրում արաբերենով եւ վրացերենով ելույթ ունեցան տարհանվածների երեխաները, փախստական կանայք:

Համերգին մասնակցեցին նաեւ Վիրահայոց թեմի «Հայարտան» դուդուկահարների խումբը , «Տարոն» պարային համույթը: «Հայարտուն» կենտրոնի ստեղծագործական խմբերի ելույթներն ընդունվեցին բուռն ծափահարություններով եւ առանձնահատուկ ջերմությամբ: ՄԱԿ-ի կոմիսարիատի ներկայացուցիչը «Հայարտուն» կենտրոնին (ղեկ.՝ Լեւոն Չիդիլյան) հանձնեց պատվոգիր:

Տարբեր երկրներից գաղթած եւ Վրաստանում հաստատված փախստականներին իրենց ելույթները նվիրեցին ուկրաինական, ադրբեջանական, ռուսական, աբխազական համայնքների անհատ եւ համույթային կատարողներ:

Միջոցառմանը ներկա էին Վրաստանի բռնագրավված տարածքներից բռնի տարհանված անձանց վերաբնակեցման եւ փախստականների նախարար Սոզար Սուբարին, ՄԱԿ-ի տարհանվածների գործերով Գերագույն կոմիսարիատի Հարավային Կովկասի երկրներում ներկայացուցիչ Յոհաննես ֆան Դեր Կլաուն, փախստականներ՝ Իրաքից, Սիրիայից, Ուկրաինայից, Աբխազիայից, Ցխինվալիից, Վրաստանի բազմազգ բնակչության ներկայացուցիչներ:

# ՀԱՐՑ - ՊԱՏԱՍԽԱՆ ❋ ԱՅԼԱԶԱՆ ❋ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

## ՀՈՒՆԻՍԻ 20-Ը՝ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ



***«Արաբական գարունից», սիրիական ճգնաժամից հետո, փախստականների հարցը կարեւորագույն տեղ է գրավել համաշխարհային հանրության համար: Հետաքրքիր է, ՄԱԿ-ը որեւէ կերպ արչագանքո՞ւմ է դրան, եւ ի՞նչ վիճակագրություն գոյություն ունի այդ հարցով:***

***Ս. Բարսեղյան***

***Մառնեուլի***

Արձագանքը, ինչպես նաեւ վիճակագրությունը, բնականաբար, գոյություն ունեն:

ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի որոշմամբ, 2000 թվականին հունիսի 20-ն ընդունվել է որպես «Փախստականների միջազգային օր»: Տարիներ շարունակ տարբեր երկրներ ունեցել են փախստականներին նվիրված իրենց հիշարժան օրերը: Ամենաճանաչվածներից մեկը համարվում էր մի շարք երկրներում հունիսի 20-ին նշվող աֆրիկյան փախստականների օրը: 2000թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան, ցույց տալով իր զորակցությունը Աֆրիկային, որտեղ մեծ թվով փախստականներ կային, միաձայն որոշում ընդունեց հունիսի 20-ն ամեն տարի՝ որպես «Փախստականների միջազգային օր» նշելու մասին: Այս օրը այն փաստի հաստատումն է, որ Երկրի վրա պատերազմները չեն դադարում: Դրանց հետեւանքով, տարեցտարի ավելանում է փախստականների ու տեղահանվածների թիվը: 2016 թվականի վերջի տվյալներով, ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի մտահոգության շրջանակում հայտնվել է 65 մլն անձ: Նրանք ե'ւ փախստականներ են, ե'ւ ապաստան հայցողներ, ինչպես նաեւ ներքին տեղահանված, քաղաքացիություն չունեցող անձինք: Այս 65 մլն ցուցանիշը, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո, ամենամեծ թիվն է, որ գրանցվել է: 2009թ. այս թիվը եղել է 30 մլն, 2012թ.՝ 45 մլն:

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԾԽԵԼԸ՝ ՍԵՌԱԿԱՆ ԹՈՒԼՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԴՐՅԱ՞Լ



***Ծխախոտի վնասների մասին շատ է գրվել, սակայն հետաքրքիր է, որքանո՞վ է դա ազդում մարդու «ինտիմի» վրա:***

***Ն.Վ.***

***Թբիլիսի***

Ծխող մարդկանց շրջանում սեռական խնդիրներն առավել հաճախ են ի հայտ գալիս: Մասնավորապես, ծխող մարդկանց մոտ բավական հաճախ սեռական թուլություն (էրեկցիայի խանգարում) է առաջացնում, քանի որ ծխախոտի ծուխը նեղացնում է անոթները եւ խափանում սեռական օրգաններին արյան մատակարարումը:

Սեռական թուլությունը, որպես կանոն, միանգամից ի հայտ չի գալիս: Որոշ ժամանակ, կարծես, ամեն ինչ նորմալ է լինում, եւ տղամարդը նորմալ սեռական հարաբերություններ է ունենում: Հետո, մի անգամ կարող է վաղաժամ սերմնաժայթքում լինել, ուրիշ անգամ, կարող է սերմ չլինել: Մեկ օր էրեկցիան կարող է մինչեւ սեռական ակտի ավարտը չպահպանվել, մեկ այլ օր՝ անկանոն լինել:

Իհարկե, բոլոր այս խնդիրներին ցանկացած առողջ տղամարդ կարող է բախվել, սակայն, եթե նման դրվագները ժամանակ առ ժամանակ կրկնվում են, արժե մասնագետին դիմելու մասին մտածել:

Շատերն այս նախանշաններն անտեսում են՝ վերագրելով ամեն ինչ հոգնածությանը կամ տրամադրության անկմանը: Երբեմն, երբ նման մարդիկ դիմում են մասնագետի, պարզվում է, որ նրանց խնդիրներն սկսվել են մեկ կամ նույնիսկ մի քանի տարի առաջ:

Ծխելը սեռական թուլության եւ այլ խնդիրների առաջացման միակ պատճառը չէ, եւ, իհարկե, անպայման չէ, որ ծխողները խնդիրներ ունենան, սակայն ապացուցված փաստ է, որ ծխելը մահաբեր ազդեցություն ունի ե'ւ սրտի, ե'ւ սեռական կարողունակության վրա:

ՀԵՏԱՔՐՔԻՐ Է

## ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՆ ՓՐԿՈՒՄ Է ՏԱԳՆԱՊԻՑ

Եթե պատասխանատու հանդիպումից առաջ դուք դողում եք եւ ձեր տեղը չեք գտնում, պետք չէ հանգստացնող կաթիլներ կուլ տալ: Ավելի լավ է 20 կքանիստ անել եւ պառկած ձգումներ:

Պարբերական ֆիզիկական վարժությունները կարող են զգալիորեն նվազեցնել տագնապայնության աստիճանը, որը հաճախ շատ քրոնիկական հիվանդությունների մշտական ուղեկիցն է, եւ մարդուն թերեւս ավելի շատ է տանջում, քան ֆիզիկական ցավը:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

## ԻՆՉԻ՞Ց Է ԱՐՅԱՆ ՃՆՇՈՒՄ ԱՌԱՋԱՆՈՒՄ

***Մարդու օրգանիզմում, արյան շրջանառության համակարգում, հիմնական ծառայությունն ընկնում է փոքր արյունատար անոթների վրա:***

Այդ ժամանակ խորհուրդ է տրվում օգտագործել ածխաջրերով առավելապես հարուստ սննդամթերք, ինչպիսիք են՝ մրգերը, կանաչեղենը, հատապտուղները, մեղրը եւ ընդհակառակը՝ չչարաշահել սպիտակուցներով հարուստ եւ ածխաջրերի պակասով աչքի ընկնող սնունդ՝ ձու, միս, կաթ, պանիր, սիսեռ, ընդեղեն՝ ընկույզ: Սպիտակուցային սննդի ամենօրյա օգտագործվող քանակի աճը վնասակար չէր լինի օրգանիզմի համակարգում աճող հիմնայնության բարձրացումը փոխհատուցվեր օգտագործվող թթվի քանակի համապատասխան աճով, այն էլ՝ թթվի օրգանական տեսակներով, ասենք՝ խնձորի քացախով, խնձորով, խաղողով, լոռամրգով կամ նրանց հյութերով: Արյան ռեակցիան միշտ հիմնային է, բայց նրա հիմնայնությունը կարող է աճել եւ նվազել: Հիմնայնության աճի դեպքում, արյունը թանձրանում է, եւ նրա մեջ հայտնվում է նստվածք՝ մանր փաթիլների տեսքով: Սակայն թանձրացած արյունը դժվարությամբ կանցնի մանրագույն արյունատար անոթների պատերից ներս: Վերը նշված փաթիլները խցանում են անոթներից մի քանիսը, եւ, որոշ ժամանակ անց, տեղի է ունենում արյան հակառակ հոսք, որի հետեւանքով էլ բարձրանում է արյան ճնշումը: Ժողովրդական բժշկությունը խորհուրդ է տալիս ավելացնել օգտագործվող թթվի ամենօրյա քանակությունը թթվի օրգանական տեսակներով, ինչպիսիք են՝ խնձորը, խաղողը, լոռամիրգը կամ դրանց հյութերը: Ամեն օր հարկավոր է ուտել այնպիսի քանակության միրգ, որը համարժեք է չորս բաժակ հյութի:



Կերակրի աղը օրգանիզմից խլում է հեղուկները: Այդ իսկ պատճառով, արյան բարձր ճնշում ունեցող մարդկանց օրաբաժնում հարկավոր է կրճատել աղի ուտելիքները: Իզուր չէ, որ աղի կերակուր ընդունելուց հետո սկսում ենք ջուր խմել: Մինչեւ օրգանիզմից դուրս գալու պահը, ավելորդ հեղուկն անցնում է արյան մեջ՝ այսպիսով առաջացնելով արյան ճնշման բարձրացում: Երբ աղը եւ աղի կերակուրները կրճատվում են օրաբաժնից, արյունը հեշտորեն ազատվում է իր մեջ պարունակվող հեղուկից, եւ արյան ճնշումը իջնում է: Ի տարբերություն աղի, մեղրը թողնում է ճիշտ հակառակ ազդեցություն: Եթե ամեն օր ուտելու ընթացքում օգտագործեք մեղր, ապա այն արյան միջից կխլի ավելորդ խոնավությունը՝ նպաստելով արյան ճնշման իջեցմանը:

## ԹԵՎԱՎՈՐ ՄՏՔԵՐ



Մարդու բարձրն ու ցածրը չկա: Ու քանի դեռ ապրում ես, այնպես ապրիր այդ ողջ հրաշալի ժամանակը, քո կյանքի ժամանակը, որպեսզի ոչ մի բան չավելացնես աշխարհի աղետներին ու տխրությանը, այլ ժպտա կյանքի անծայր ցնծության ու խորհրդի հանդեպ:

***ՎԻԼՅԱՄ ՍԱՐՈՅԱՆ***
***(1908-1981)***
***Ամերիկահայ գրող***

Թե աշխարհի զորքերն էլ գան,
Տերը չուզի, կընկնեն խոցված,
Տերը ուզեց, չեմ մնա ողջ, ինձ
խոցող տեգն է իմ առաջ...

***ՇՈԹԱ ՌՈՒՍԹԱՎԵԼԻ***
***(1172-1216)***
***Վրաց բանաստեղծ***

Շատերը, չգիտես ինչու, կարծում են, թե անարդարացի նվաճումները նվազ չափով են խայտառակում պետություններին, քան առանձին անհատների գողությունները:

***ՀԵԼՎԵՑԻՈՍ***
***(1715-1771)***
***Ֆրանսիացի փիլիսոփա***

Պատմությունը մեր գործերի գանձարանն է, անցյալի վկան, օրինակ ու խրատ՝ ներկայի, նախազգուշացում՝ գալիքի համար:

***ՍԵՐՎԱՆՏԵՍ***
***(1547-1616)***
***Իսպանացի գրող***

Աշխարհը հայելի է, եւ այն վերադարձնում է յուրաքանչյուրին իր սեփական պատկերը:

***ԹԵՔԵՐԵՅ***
***(1811-1863)***
***Անգլիացի գրող***

Չէ որ պսակ հյուսելը դյուրին է ավելի, /Քան գտնել գլուխ դրան արժանի:

***ԳՅՈԹԵ***
***(1749-1832)***
***Գերմանացի քնարերգու***

Արիությունը չի մեռնում հերոսի հետ, այլ նրանից երկար է ապրում:

***ԵՎՐԻՊԻԴԵՍ***
***(մ.թ.ա.480-մ.թ.ա.406)***
***Հույն ողբերգակ***

Ուղղվելու առաջին պայմանը, իր մեղքի գիտակցումն է:

***ՍԵՆԵԿԱ***
***(մ.թ.ա.4-65)***
***Հռոմեացի փիլիսոփա***

## ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

*☺ Աշխենը շատ տգեղ կին էր:*

*Մի օր ամուսնուն՝ Գեւորգին, կանգնեցնում է հարեւան Արշակը.*

*- Գեւո'րգ ջան, ախր շատ կներես, մի անհամեստ հարց տամ, էդ գեշ կնգանդ ոնց ե՞ս սիրում:*

*- Հարեւա'ն ջան, ոնց ասեմ. քո կնգադ անունը տալիս եմ, իմին սիրում:*

*☺ Հյուրը, ցույց տալով տղամարդու լուսանկարը, հարցնում է տանտիրուհուն.*

*- Իսկ սա ո՞վ է:*

*- Սա իմ խեղճ ամուսինն է,- հոգոց հանելով՝ պատասխանում է տանտիրուհին:*

*- Վա՜յ, կներեք, ես չգիտեի, որ նա...*

*- Չէ', չէ', ոչինչ չի պատահել: Պարզապես նա իրոք խեղճ է:*

*☺ Մեկը հանդիպում է իր ընկերոջը, ում մի 10 տարի տեսած չի լինում.*

*- Բարեւ, Գեւորգ ջան, ո՞նց ես, ո՞նց չես, լսի, բա չես ուզու՞մ ամուսնանալ:*

*- Է՜հ, ես ուզում եմ, բայց կնիկս ու երեխեքս դեմ են:*

*☺ Կինը ամուսնուն ուղարկում է դեղատուն.*

*- Երկու հատ պրեզերվատիվ կառնես, երկու հատ էլ՝ պիպետկա:*

*Ամուսինը գնում է դեղատուն, ջղայնացած վերադառնում.*

*- Ես էլ էդ դեղատունը չեմ մտնի:*

*- Ինչի՞: Ի՞նչ է եղել:*

*- Մտա ասացի՝ ինձ երկու հատ պրեզերվատիվ տվեք, ասաց՝ վերջացել է, ասացի՝ երկու հատ պիպետկա տվեք, աշխատողները սկսեցին վրաս ծիծաղել:*

*☺ Աղջիկը վերադառնում է դպրոցից: Նրա մոտ մի մեքենա է կանգնում:*

*Վարորդն ասում է.*

*- Եթե նստես, քեզ կոնֆետ կտամ:*

*- Ո'չ:*

*- Պաղպաղակ կգնեմ:*

*- Չե'մ նստի:*

*- Նոր տիկնիկ կառնեմ:*

*- Պա'պ, քեզ հարյուր անգամ ասել եմ՝ էս «Զապորոժեցով» դպրոց մի' արի:*

# ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

## ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ



*Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի նստավայրում, տեղի ունեցավ խորհրդակցություն՝ Հայաստան-Սփյուռք համահայկական վեցերորդ համաժողովի նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ:*

Նախագահն ընդգծել է, որ Հայաստան-Սփյուռք նախորդ խորհրդաժողովը տեղի է ունեցել 2014 թվականին, եւ այդ երեք տարիների ընթացքում թե' Հայաստանում, թե' Սփյուռքի տարբեր համայնքներում զգալի փոփոխություններ են իրականացվել, ի հայտ են եկել նոր մարտահրավերներ ու հնարավորություններ, որոնք անհրաժեշտ է բազմակողմանիորեն քննարկել առաջիկա համաժողովի ընթացքում:

Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը ներկայացրեց միջոցառման ծրագիրը, որի վերաբերյալ մասնակիցները հանդես եկան իրենց առաջարկություններով ու դիտարկումներով:

Հանրապետության նախագահի կողմից տրվեցին համապատասխան հանձնարարականներ:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԵՎՐՈՊԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԱԳԱԹԱԺՈՂՈՎՈՒՄ



*Աշխատանքային այցով Բելգիայի Թագավորությունում գտնվող Սերժ Սարգսյանը հունիսի 22-ին Բրյուսելում մասնակցեց եվրոպական ժողովրդական կուսակցության (ԵԺԿ) ընդլայնված կազմով գագաթաժողովին: Այն վարեց ԵԺԿ նախագահ Ժոզեֆ Դոլը:*

Գագաթաժողովին մասնակցեցին եվրոպական խորհրդի եւ եվրոպական հանձնաժողովի նախագահներ Դոնալդ Տուսկը եւ Ժան-Քլոդ Յունկերը, եվրոպական խորհրդարանի նախագահ Անտոնիո Տայանին, ԵՄ անդամ եւ Արեւելյան գործընկերներ երկրներից ԵԺԿ-ին անդամակցող կուսակցությունները ներկայացնող պետությունների եւ կառավարությունների ղեկավարներ:

Օրակարգի շրջանակներում, գագաթաժողովի մասնակիցները քննարկեցին եվրոպական խորհրդի հանդիպման նախապատրաստական աշխատանքները, միգրացիոն խնդիրների եւ դրանց հիմնարար պատճառների վերացմանն ուղղված հարցեր: ԵԺԿ գագաթաժողովի հիմնական օրակարգային հարցերից բացի, անդրադարձ եղավ Արեւմտյան Բալկաններում տիրող իրավիճակին:

Սերժ Սարգսյանը գագաթաժողովում հանդես եկավ ելույթով, որում անդրադարձավ Հայաստանում կայացած խորհրդարանական ընտրություններին, արձանագրված առաջընթացին, Հայաստան-Եվրամիություն համագործակցության օրակարգին, ինչպես նաեւ Հարավային Կովկասի տարածաշրջանի կայունության եւ անվտանգության ապահովման խնդիրներին:

## ՀԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԺԱՆԱՑԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ



*Կառավարության արտահերթ նիստում, Հայաստանի փոխվարչապետ, Միջազգային տնտեսական ինտեգրման եւ բարեփոխումների նախարար Վաչե Գաբրիելյանը ներկայացրեց Հայաստանի կառավարության՝ 2017-2022 թթ. Հայաստանի կայուն զարգացումը երաշխավորող գործունեության ծրագիրը:*

Փոխվարչապետը նշեց, որ ծրագիրը հենվում է Հայաստանի նախագահի ուղերձի, Հայաստանի Հանրապետական կուսակցության եւ Հայ Յեղափոխական Դաշնակցության նախընտրական ծրագրերի ու կոալիցիոն հուշագրի սկզբունքների, ինչպես նաեւ լայն հասարակայնության առաջադեմ գաղափարների վրա:

Հայաստանի կառավարության նոր ծրագրի տեսլականը հիմնված է անվտանգ, արդար, ազատ եւ խելացի Հայաստան ունենալու սկզբունքի վրա: Հստակ ամրագրված են նաեւ այն առաջնահերթությունները, որոնք կառավարությունն ունի արտաքին քաղաքականության եւ անվտանգության ոլորտում: Ծրագիրը բաղկացած է 4 հիմնական բաժնից՝ պետական կառավարման եւ իրավական համակարգ, արտաքին քաղաքականություն եւ պաշտպանություն, տնտեսության առաջընթաց եւ սոցիալական ոլորտ: Քննարկման ավարտին գործադիրը հավանության արժանացրեց Հայաստանի կառավարության ծրագիրը, որը ներկայացվելու է Հայաստանի Ազգային ժողովին:

## ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՆԴԵՍ ԿԳԱ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿ ՈԼՈՐՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՆԳՈՒՅՑԻ ԴԵՐՈՒՄ

*Հայաստան եւ Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման օդային գծերի կառուցումից եւ շահագործման հանձնելուց հետո, Հայաստանը հանդես կգա էլեկտրաէներգետիկ ոլորտի տարածաշրջանային հաբի (հանգույցի) դերում՝ կապելով Իրանի, Վրաստանի եւ Ռուսաստանի էլեկտրաէներգետիկական համակարգերը:*

Կառավարության գործունեության առաջիկա հինգ տարիների ծրագիրն ամրագրել է, որ ինչպես Իրան-Հայաստան, այնպես էլ Հայաստան-Վրաստան օդային գծերը շահագործման կանձնվեն 2019թ. վերջին: Իրան-Հայաստան 400կվտ էլեկտրահաղորդման գծի կառուցման ծրագրի շրջանակներում, որն արդեն մեկնարկել է, 2017-2018թթ. ընթացքում նախատեսվում է ավարտել հենասյուների եւ հաղորդալարերի մոնտաժման, ինչպես նաեւ ենթակայանի կառուցման աշխատանքները: Գիծը եւ ենթակայանը շահագործման կհանձնվեն 2019թ.: Այն հնարավորություն կընձեռի 3 անգամ ավելացնել էլեկտրաէներգիայի փոխհոսքերը հարեւան Իրանի հետ: Մինչեւ տարեվերջ, կառավարությունը մտադիր է սկսել նաեւ Հայաստան-Վրաստան 400կվտ օդային գծի նախագծման աշխատանքները: Ծրագրի իրականացման ավարտ է սահմանված 2019 թվականը:

Նշենք, որ հայտարարված միջազգային մրցույթի շրջանակում այս պահին ընթանում է Հայաստան-Վրաստան էլեկտրահաղորդման գծի կառուցման կապալառու կազմակերպության ընտրության գործընթացը, որը նախատեսվում է ավարտել սեպտեմբերին:

## ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԵԼ Է 19 ՀԱԶԱՐ ՓԱԽՍՏԱԿԱՆ

### ԵՐԵՔ ՄԻԼԻՈՆ ԵՎՐՈ՝ ՍԻՐԻԱՑԻ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ

*Այսօր Հայաստանում ապրում են Իրանից, Իրաքից, Ուկրաինայից, Ասիայի եւ Աֆրիկայի մի քանի երկրներից գաղթած փախստականներ՝ 19 000 հոգի:*

Հայաստանում ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՓԳՀ) գրասենյակի ներկայացուցիչ Քրիստոֆ Բիրվիրթը նշեց, որ, Սիրիայում ողբերգական հակամարտության սկսումից հետո, Հայաստանն ընդունել է ավելի քան 22000 մարդու՝ հիմնականում էթնիկ հայերի: ՄԱԿ ՓԳՀ տվյալներով, այժմ Հայաստանում շարունակում է ապրել 15000 տեղահանված սիրիահայ:

Հայաստանը կանգնած է այլ տեղահանության մարտահրավերների առջեւ եւս: 1988-1992 թթ. Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետեւանքով, բազմաթիվ տեղահանված անձինք դեռեւս չեն օգտվել Հայաստանում քաղաքացիության ձեռքբերման իրենց հնարավորությունից եւ շարունակում են մնալ դե յուրե փախստականներ:

2016 թվականի ապրիլին, ԼՂ հակամարտության սրման արդյունքում, ավելի քան 2000 մարդ Արցախի Հանրապետությունից տեղափոխվել են Հայաստան եւ կացարան գտել բարեկամների կամ ընկերների մոտ:

Եվրամիության տարածաշրջանային ներդրումային հիմնադրամը հաստատել է սիրիական ճգնաժամի հետեւանքների մեղմմանն ուղղված 275 միլիոն եվրո արժողությամբ ծրագիր, որից 3 միլիոնը հատկացվելու է Հայաստանում սիրիացի փախստականներին:

### ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

*Հունիսի 21-ին Հայասփանի նախագահ Սերժ Սարգսյանի նսփավայրում անցկացվեց խորհրդակցություն, որի ընթացքում քննարկվեցին նախագահի կարգադրությամբ սփեղծված՝ Հանրային ծառայության համակարգի բարեփոխումների ապահովման աշխափանքային խմբի գործունեության ընթացքը եւ միջանկյալ արդյունքները:*

*Աշխափանքային խմբի ղեկավար փոխվարչապեփ, միջազգային փնփեսական ինփեգրման եւ բարեփոխումների նախարար Վաչե Գաբրիելյանը ներկայացրեց մշակված նախագծերի հիմնական նորամուծությունները, այդ թվում՝ քաղաքացիական ծառայության լիազոր մարմնի կարգավիճակին, լիազորություններին վերաբերող հարցեր: Քննարկման արդյունքում, աշխափանքային խմբի ղեկավարին փրվեցին մի շարք հանձնարարականներ:*

### ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՎԵՑ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻՆ

*Հունիսի 22-ին Հայասփանի Ազգային ժողովը հավանություն փվեց կառավարության գործունեության ծրագրին: Կառավարության գործունեության ծրագրին հավանություն փալու մասին հարցին, կողմ քվեարկեց 64, դեմ՝ 31 պափգամավոր: Քվեարկությունից առաջ, Ազգային ժողովի «Ծառուկյան» եւ «Ելք» խմբակցությունները հայփարարել էին կառավարության ծրագրին դեմ քվեարկելու մասին:*

### ՄԵԿՆԱՐԿԵՑ «ԱՐԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ



*Հայասփանի սփյուռքի նախարարության Սփյուռքի երեխաների հայրենաճանաչության «Արի փուն» ծրագրի առաջին փուլին այս փարի մասնակցում է 7 երկրից 163 երեխա: Ծրագրի հանդիսավոր փուլի բացմանը այս մասին հայփարարեց Հայասփանի սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը: Նա ընդգծեց, որ ծրագրին մինչ օրս 7000 մարդ է մասնակցել:*

*Ապրիլի 10-20-ը «Արի փուն» ծրագրի հափուկ փուլով Հայասփան են այցելել 66 պափանի ու պարմանուհի՝ Ֆրանսիայի Ալֆորվիլ քաղաքի «Ա. Մեսրոպ Արապեան», Փարիզի «Դպրոցասեր» եւ Մարսելի «Համազգային» վարժարաններից:*

*«Արի փուն» ծրագիրն իրականցվում է 2009 թվականից: Սփյուռքահայ երիփասարդներն այցելում են Հայասփանի պափմական եւ փեսարժան վայրեր, հանդիպում պեփական, հասարակական եւ մշակութային գործիչների հեփ:*

*Այս փարի այն կշարունակվի հունիսի 18-ից օգոսփոսի 26-ը:*

### ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿՈՒՐՍԸ

(23 հունիսի)

*Հայասփանի Ազգային բանկի կողմից սահմանվել է փարադրամի փոխանակման հեփեւյալ կուրսը.*

| ՏԱՐԱԴՐԱՄ | ԱՌՔ | ՎԱՃԱՌՔ |
|---|---|---|
| ԱՄՆ ԴՈԼԱՐ | 478,20 | 481,80 |
| ԵՎՐՈ | 532,00 | 538,00 |
| ՌՈՒԲԼԻ | 7,87 | 8,13 |

*Հունիսի 16-ի համեմափությամբ, ԱՄՆ դոլարի կուրսը նվազել է 1,6 դրամով:*

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

### ՀՈՒՆԻՍ



*24.06.2017. Սուրբ Ներսես Մեծ Հայրապետի եւ Խադ եպիսկոպոսի հիշատակության օր*

*25.06.2017. Բարեկենդան Սուրբ Գրիգոր Լուսավորչի պահոց*

*26.06.2017. Հիշատակ՝ Սուրբ Եպիփան Կիպրացու, Բաբելաս Հայրապետի եւ նրա երեք աշակերտների*

*27.06.2017. Սուրբ Կոստանդիանոս կայսեր եւ նրա մոր՝ Հեղինեի հիշատակության օր*

*29.06.2017. Սուրբ Թեոդիտոն Գաղատացու, Թալիլյա բժշկի եւ 7 կույսերի հիշատակության օր*

## ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

### ՎԱՍԻԼԻ ՔՈՉՈՅԱՆ

91 տարեկանն հասակում, կյանքից հեռացավ վաստակաշատ գյուղատնտես, տնտեսագետ, ճանաչված կուսակցական Վասիլի Հայկի Քոչոյանը:

Ծնվել է 1926 թվականին, Ախալքալաքիի Բուռնաշեթ գյուղում, հողագործի ընտանիքում: Ավարտել է հարեւան Ազավրեթ գյուղի միջնակարգ դպրոցը, բարձրագույն կրթությունն ստացել է Երեւանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում:

Միջնակարգը դեռ չավարտած՝ գյուղի կոլտնտեսությունում աշխատել է բրիգադավար, իսկ դպրոցն ավարտելուց հետո՝ խրճիթ-ընթերցարանի վարիչ, միաժամանակ՝ հինգ գյուղ միավորող գյուղխորհրդի տարածքային կուսկազմակերպության քարտուղար:



Ապա, 28 տարեկան Վասիլի Քոչոյանին ընտրում են Բուռնաշեթի կոլտնտեսության վարչության նախագահ: Մի քանի տարում նա համալրեց շրջանի առաջավորների շարքերը:

1978 թվականին արտադրական բարձր ձեռքբերումների, կազմակերպչական աշխատանքների անուրանալի հմտության համար, այդ փոքրիկ տնտեսության ղեկավարի պաշտոնից 52-ամյա Վ. Քոչոյանը բարձրացավ մինչեւ Վրաստանի կոմկուսի Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա) շրջկոմի առաջին քարտուղար: Այդ պաշտոնում աշխատեց շուրջ 11 տարի, իսկ երբ անցավ կենսաթոշակի, ընդամենը 63 տարեկան էր: Բոգդանովկայի կուսշրջկոմի առաջին քարտուղար աշխատելու տարիներին, շրջանը սոցիալ-տնտեսական զգալի զարգացում ապրեց. կառուցվեցին եւ շարք մտան արտադրական ու կրթամշակութային բազմաթիվ օբյեկտներ:

Վ.Քոչոյանը եղել է ԽՍՀՄ եւ Վրաստանի Գերագույն խորհրդի չորս գումարումների պատգամավոր, պարգեւատրվել ԽՍՀՄ բազմաթիվ շքանշաններով ու մեդալներով:

Անխոնջ աշխատողի, զգայուն ընկերոջ, ընտանիքի հոգատար ծնողի լուսավոր հիշատակը միշտ վառ կմնա հարազատների, բոլոր նրան ճանաչողների սրտերում:

*ՄԻ ԽՈՒՄԲ ԸՆԿԵՐՆԵՐ*

## ՏՐԱՆՍՊՈՐՏ



### ԳՈՐԾՈՒՄ Է ԵՐԵՎԱՆ-ԲԱԹՈՒՄԻ ԳՆԱՑՔԸ

Ինչպես տեղեկացրել է Վրաստանի երկաթուղին, զբոսաշրջության ամառային շրջանի մեկնարկի կապակցությամբ, գործարկվել է Երեւան-Բաթումի-Երեւան ամենօրյա երկաթուղային ուղերթը: Առաջին գնացքը Երեւանից դուրս է եկել հունիսի 15-ին, ժամը 15:30-ին: Այն Թբիլիսի է հասել կեսգիշերին, իսկ հաջորդ օրը, առավոտյան ժամը 7:00-ին, վերադարձել Երեւան: Ինչպես տեղեկացնում է գերատեսչությունը, այդ ուղերթը, նախորդ տարիների օրինակով, կգործի մինչեւ սեպտեմբերի 15-ը:

### ԲԱԹՈՒՄԻԻ ՀԵՏ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԽՍԸ ԿԹԱՆԿԱՆԱ

Բացառված չէ, որ ամառային սեզոնին Թբիլիսի-Բաթումի գնացքի տոմսերը թանկանան: Ինչպես նշեցին «Վրաստանի երկաթուղի» ընկերությունում, այդ մասին ավելի ուշ կարվի պաշտոնական հայտարարություն, թեպետ նշեցին, որ ավելացումն առնչվում է միայն «բիզնես» եւ առաջին կարգի վագոններին: Ինչպես տեղեկացրին ընկերությունում, սեզոնային գները կգործեն հուլիսի սկզբից մինչեւ սեպտեմբերի 15-ը:

## ՍՊՈՐՏ

### ԲՌՆՑՔԱՄԱՐՏ. ՕԹԱՐ ԵՐԱՆՈՍՅԱՆԸ ՆՎԱՃԵՑ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՈՒՂԵԳԻՐ

Ուկրաինայի Խարկով քաղաքում անցկացվող Եվրոպայի բռնցքամարտի առաջնությունը, որի մասնակիցների թվում է Վրաստանի հավաքականի անդամ, Եվրոպայի 2015 թվականի փոխչեմպիոն, ախալքալաքցի Օթար Երանոսյանը:



Առաջնությանը Վրաստանի հավաքականի կազմում հանդես եկող ինը բռնցքամարտիկներից միայն Օթար Երանոսյանին (60 կգ քաշային կարգ, մարզիչ՝ Ատոմ Էլիզբարյան) եւ Յագո Կիզիրիային (81կգ) հաջողվեց հասնել մրցաշարի քառորդ եզրափակչին՝ դրանով իսկ նվաճելով օգոստոսի 25-ից սեպտեմբերի 2-ը Գերմանիայի Համբուրգ քաղաքում անցկացվելիք աշխարհի առաջնության ուղեգիրը:

### ՌԵԳԲԻ. ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՆ ՄԻՆՉԵՎ ՔՍԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ՉԵՄՊԻՈՆ

Թբիլիսիում եւ Քութայիսիում եզրագիծը հատեց մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնությունը, որին մասնակցում էին տարիքային այդ խմբի 12 լավագույն թիմերը:

Եզրափակիչ հանդիպմանը, Նոր Զելանդիայի հավաքականը պարտության մատնեց Անգլիայի թիմին եւ նվաճեց աշխարհի ուժեղագույնի կոչումը: Առաջնության բրոնզե մեդալակիրներ դարձան Հարավային Աֆրիկայի Հանրապետության ռեգբիստները:

Վրաստանի հավաքականը, առաջնությունում շահելով երկու հանդիպում, զբաղեցրեց տասներորդ հորիզոնականը:



## ԽԱՉԲԱՌ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 1.Ռուս քնարերգու Սերգեյ Եսենինի հայտնի հերոսուհին: 5.Անգլիացի գրող Ջեկ Լոնդոնի «… Իդեն» երկը: 7.Վաղ քրիստոնեական ավանդություններ Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի մասին: 10.Գրող, թատերագիր … Ջեյթունցյան: 12.Ֆրանսիացի գրող Գի դը …: 15.Ծովափնյա առողջարանային քաղաք Ռուսաստանում: 16.Աշխարհահռչակ կոմպոզիտոր … Խաչատրյան: 17.Թիֆլիսում ծնված հայ գրող, «Նոր դար» թերթի սրբագրիչ …-Դոս: 18.Սպորտային նաեւ պարային հագուստ: 21.Մաշտոցյան այբուբենի տառ: 22.Գետ Ռուսաստանում: 24.Տիբեթը աշխարհին բացահայտող … Բլավատսկայա: 27.Բուրատինոյին «ստեղծող» Պապա …ն: 28.Իմաստության եւ ողջախոհության աստվածուհին Հայոց դիցաբանությունում: 29.Գործվածքի տեսակ: 33.Մաշտոցյան այբուբենի գիրը: 35.Պետություն Օվկիանիայում: 36.… տալ, … առնել: 38.…յան ծով (լիճ Ասիայում): 40.Ե՛վ մեքենայի, ե՛ւ աղբյուրի: 41.Քաղաք եւ նահանգ Արեւմտյան Հայաստանում: 43.Գիքորի մայրը: 44.Ա.Բակունցի գրական հերոսներից: 46.Քաղաք Հնդկաստանում: 50.Ստալինյան բռնապետության զոհ Հայկ Բժշկյանցը: 52.Ե՛վ Բաբաջանյան, ե՛ւ Շիրազ: 53.1907-1912 թթ. Թբիլիսիում հրատարակվող «Հուշարար» ամսագրի խմբագիր Արամ …: 54.Կղզիական պետություն … Լանկա: 55.…-հնազանդ: 56.Ծառի պտուղ: 57.Պետություն Պարսից ծոցում:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 2.Ծանր …: 3.Աշխարհամաս: 4.Գետ Սիբիրում: 5.Վրաց շախմատիստուհի … Չիբուրդանիձե: 6.Գյուղացու հին ոտնաման: 7.Ավ.Իսահակյանի «… սերը»: 8.Ամայի, լերկ, բուսազուրկ: 9.Հանածո: 11.Հայկական ֆիլմ «… անուրջներ»: 13.Հայ մեծ վիպասան Րաֆֆու վեպերից: 14.Հայ դատի պաշտպան, նորվեգացի գիտնական Ֆրիտյոֆ …: 19.Վայրի էշ: 20.Գետ Հայաստանում: 23.Ուսանողի դասարանը: 25.Գր.Նարեկացու «Մատյան ողբերգությանը» ժողովրդի լեզվով: 26.Զեւսի եւ Հերայի որդի ռազմի աստվածը: 27.Գյուղ Ախալքալաքիի շրջանում: 30.Արյունածուծ միջատ: 31.Ս.Փարաջանովի ֆիլմերից՝ «…ի բերդի ավերակները»: 32.Լեռնանցք Հայաստանի Մարտունի-Եղեգնաձոր ճանապարհին: 34.Միավորված ազգերի կազմակերպություն: 37.Գետ Վրաստանում: 39.Արմեն Տիգրանյանի հայտնի օպերան: 40.Ժխտական նախածանց: 42.Մահճակալի գլխավերեւը: 45.Ֆրանսիացի գրող, «Ասկանիո» վեպի հեղինակը: 47.Բանջարանոցային բույս: 48.Ծովափնյա քաղաք Ղրիմում: 49.Ֆրանսահայ նկարիչ Գառնիկ Զուլումյանը: 51.Գետ Հայաստանում, Արաքսի վտակներից:

*Կազմեց ԱՆՆԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԸ*

### ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

***ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ.*** 7.Պռոշյան: 9.Իպրիտ: 10.Շեյկ: 11.Համամիտ: 13.Իսլամ: 16.Լառ: 17.Կում: 19.Կրպակ: 22.Հունար: 24.Ռատուշա: 25.Դեպք: 27.Բիլինա: 29.Նեստլե: 32.Պյոտր: 33.Սոմալի: 35.Տեղը: 38.Քոս: 40.Մինին: 41.Շիրա: 44.Էդիտ: 47.Դուռ: 48.Կտոր: 50.Ակոռի: 51.Էդի: 52.Ռե: 53.Փալ: 54.Շեջ: 55.Ոջիլ:

***ՈՒՂՂԱՀԱՅԱՑ.*** 1.Ոռնալ: 2.Թշվառ: 3.Մաշիկ: 4.Ռիկի: 5.Գրել: 6.Ատոմ: 8.Նետում: 12.Մայն: 14.Սիրտ: 15.Ադաշ: 18.Արեն: 19.Կադետ: 20.Պուլտ: 21.Կառե: 23.Ադիդաս: 26.Պապի: 28.Իրոք: 29.Նոթ: 30.Սրտի: 31.Լեղի: 34.Մոնիկա: 36.Ենոտ: 37.Ընտրել: 39.Արու: 42.Իդիշ: 43.Առէջ: 45.Դափ: 46.Տոլ: 48.Կիո: 49.Որի:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնեւլի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

“ВРАСТАН”
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445